

## ՀԱՐՈՒՅՑ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ԿԵՆՍԱԾԻԼՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ԶԱՆԻ ՀԱՐՅԵՐ

Ս. Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հարութ Կոստանդյանը\* ֆրանսահայ բանաստեղծության յուրօրինակ դեմքերից է: Թեև նա գրական միջավայրից՝ Փարիզից հեռու է ապրել, սակայն իր ներդրումն է ունեցել ֆրանսահայ բանաստեղծության զարգացման գործում:

Հարութ Կոստանդյանի ստեղծագործության, նրա գեղագիտական համակարգի, կենսափիլիսոփայության ձևավորման և ամբողջականացման հարցում կարևորվում է հնդկական փիլիսոփայության դերն ու նշանակությունը: Սա բացատրվում է թերևս նրանով, որ Կոստանդյանը երկար տարիներ ապրել է Հնդկաստանում:

Ընթերցելով Կոստանդյանի ստեղծագործությունները՝ առաջին հայացքից թվում է, թե նա հեռու է ֆրանսիական բանաստեղծական դպրոցից, նրա ավանդույթներից: Կոստանդյանի ստեղծագործությունն Արևելքի և Արևմուտքի պոեզիաների մի յուրօրինակ համադրություն է, թեպետ գերիշխողը արևելյան գրականության ավանդներն են, արևելյան փիլիսոփայությունը: Նրա բազմաթիվ բանաստեղծություններ, արձակ գործեր փաստում են հնդկական փիլիսոփայությունից կրած ազդեցությունների մասին: Բանաստեղծը քաջածանոթ է եղել թե՛ բուդդիզմի, թե՛ հինդուիզմի կրոնա-փիլիսոփայական ուսմունքներին, ինչպես նաև վեդայական գրականությանը, մասնավորապես՝ Ուպանիշադներին:

Բուդդիզմի, հինդուիզմի կրոնա-փիլիսոփայական ուսմունքների, վեդայական գրականության ազդեցության սահմանները ցայտուն կերպով երևում են Կոստանդյանի՝ երազի և իրականության փոխհարաբերությունների մասին ունեցած պատկերացումներում:

Կոստանդյանն իր ստեղծագործություններում թեև հստակ սահմանազատում է իրականության ու երազի տիրույթները, սակայն երբեմն-երբեմն նկատելի է նաև երազի և իրականության սահմանների մերձեցում, իսկ երբեմն նույնիսկ նույնացում: Կոստանդյանի համար երազը հաճախ դառնում է միակ իրականությունը.

... Ջի դո՛ւ ես սերմ որ նուաճել է իմ հոգին.  
Եւ ըմտրել է քեզ կայսրութեան մէջ իր թաքում՝  
Քեղեցկութեան իբրև դիմակ միակ դէմքին՝  
Որի ետին կա՛յ բազմութիւնն այս անանում՝:

\*Հարութ Կոստանդյանը ծնվել է 1909 թվականին Պարսկաստանի Պուշիք քաղաքում: Երեխային գրաճանաչություն սովորեցրել են մայրը և ծխական քահանան: 1919 թ. նրանց ընտանիքը տեղափոխվում է Հնդկաստան: Հարութը հաճախում է Բոմբեյի անգլիական վարժարան: 1926 թ. նա գնում է Եվրոպա. նախ քննություն է հաստատում Իտալիայում, ապա՝ Անգլիայում: Այնուհետև տեղափոխվում է Ֆրանսիա, որտեղ էլ ապրում է մինչև կյանքի վերջը: Երկար տարիներ մեկուսացած ապրել է Ֆրանսիայի հարավային շրջաններում: Մահկանացուն կնքել է 1978 թ.: Կոստանդյանը թողված է Մոնֆերան լեռնային գյուղի գերեզմանատանը:

Տպագրվել սկսել է 1931 թվականից: Կոստանդյանը հանդես է եկել ոչ միայն ֆրանսահայ, այլ նաև սփյուռքի այլ գաղթօջախներում հրատարակվող պարբերականներում: Հրատարակել է երկու ժողովածու՝ «Օրերի իմաստութիւնը» (1935) և «Բանաստեղծութեամբ» (1974): 1988 թ. Ալ. Թոփչյանի առաջաբանով (էջ 3-12) և ծանոթագրություններով (էջ 223-236) լույս է տեսել Կոստանդյանի գրական ժառանգության հիմնական մասը (տե՛ս Հարութ Կոստանդյան, Օրերի իմաստությունը: Բանաստեղծություններ, արձակ էջեր և նամակներ, Եր., 1988): Իսկ 1990 թ. Փարիզում հրատարակվել են նրա նամակները Ջուլյալ Գազանճյանի առաջաբանով (տե՛ս Յարութ Կոստանդեան, Նամակահ, Փարիզ, 1990, էջ 5-8):

Յարութ Կոստանդեան, Բանաստեղծութեամբ, Լիբանան, 1974, էջ 10:

Կոստանդյանի համար երազն է դառնում միակ ճշմարտությունը, երանության, երջանկության միակ ցանկալի աղբյուրը. «Ի՛նչ զով են ու զուլալ երազանքի աղբիւրները»<sup>2</sup>: Երազ-երազանք նույնարմատ բառերը Կոստանդյանի բառապաշարում հանդես են գալիս նաև որպես նույն իմաստն ունեցող բառեր: Երազ-երազանքը հնարավորություն է ընձեռում մարդուն մաքրագործվելու. «Քանի՛ անգամներ ենք եկել ու նրանց յստակ ջուրերի մէջ մեր հոգիների աղտեղութիւնը մաքրել, ու յետոյ, դալար խոտերի, խատուտիկ ծաղիկների վրայ ընկողմանած (աղբիւրների մօտ ծաղիկները սիրամարգի փետուրների պէս բազմեբանգ են ու փափուկ) ունկնդրել զարմանահրաշ հեքեաթին»<sup>3</sup>: Կոստանդյանը համոզված է, որ միայն տառապանքի միջոցով կարելի է հասնել կատարելության, իրական երջանկության:

«Կատարելութեան երազներով չարչարուած» Կոստանդյանն իր արձակ ստեղծագործություններից մեկում տալիս է իր՝ երագի բնորոշումը. «սահմանումը»: Թ՛վում է՝ երագել կարող են բոլորը, սակայն Կոստանդյանը մերժում է այդ տեսակետը. երագը ամեն մեկին հասանելի չէ, ամեն մեկն օժտված չէ երագելու կարողությամբ, «քանզի նրա (երագի - Ս. Մ.) հունտն է սէր, եւ արմատն է տառապանք, ծիւն է թախիծ ու ցողունը սփոփանք: Գերզգայնութիւն են տերեւները, եւ ինքը՝ ծաղիկն է՝ տենչանք: Քանզի նրա գեղեցկութիւնը՝ կարօտ է, խորհուրդ եւ սպասում: Նրա կարօտն է բացակայութիւն, եւ սպասումն է սէր, եւ բացակայութիւնն է՝ խորհուրդ, եւ սէրը՝ Գեղեցկութիւն»<sup>4</sup>: Առաջին հայացքից թվում է, թե Կոստանդյանն ինչ-որ բառախաղով փորձում է խճճել մարդկային երևակայությունը, մտածողությունը: Սակայն ըստ էության նա աշխատում է մերձեցնել երագի և գեղեցիկի, այսինքն՝ իրականության սահմանները:

Լարեմ ճորից մտքիս աղեղն,  
Ես որսորդ եմ երազների...<sup>5</sup>

Եվ այս հարցում Կոստանդյանն իրեն օգնական է կանչում Ինդրային («Ին՛չ օգնիր ինձ, մեծդ Ինդրա»), որը վեդայական դիցաբանության գլխավոր աստվածն է, աստվածը ամպրոպի, անձրևի, կայծակի:

Ըստ հնդկական փիլիսոփայության՝ իրականությունն ամբողջության մէջ հավերժ մաքուր, հավերժ կենդանարար, հավերժ ներող տիեզերական մի ոգի է, իսկ իրերի ողջ բազմազանությունը, առանձին վերցրած, պատրանք է (մայեա), վերջին հաշվով՝ երագ: Խնդրի մման պարզաբանումը, վերլուծությունը իր յուրօրինակ արտահայտությունն է գտել Կոստանդյանի կենսափիլիսոփայության մէջ: Մարդու գոյության իմաստն այն է, որ վերջինս գիտակցի՝ աշխարհի բազմազանությունը սուկ խաբկանք է, և գոյություն ունի միայն մեկ կյանք, մեկ նպատակ, մեկ էություն: Եվ կյանքը հավերժական է ոչ թե իր տևողությամբ, այլ տիեզերքի և մարդու փոխադարձ կապի ճանաչողությամբ: Եվ, փաստորեն, կարելի է ենթադրել, որ միայն մարդու միջոցով է տիեզերքը ճանաչում ինքն իրեն, և, վերջապես, տիեզերքը մարդն է, կենտրոնը մարդն է: Հնդկական փիլիսոփայության հիմքում ընկած է այն գաղափարը, որ աշխարհը պատահական միավորում, իրերի և երևույթների քառս չէ, այլ աստիճանաբար կանոնավորված մի ամբողջություն է, կոսմոս: Այդ նույն գաղափարն է դավանում նաև Կոստանդյանը. «Ջգացի նախ, որ իմ մէջ չէի - ես չէի իմ մէջ եղողը: Արտաքին աշխարհն էր իմ Եսը ու իսկութիւնը: Ես ինձանից դուրս էի, եւ իմ ներքին էութիւնը՝ անկարգ ու խառնաշփոթ կուտակումն էր տիեզերքի - արարչութիւնը իմ մէջ վերստին վերածուած էր քառսի - փոքրութեանս մէջ սեղմուելով, խանգարուել էին կարգն ու կարգապետութիւնը սկզբնական:

Փրկութեան միակ միջոցն էր ուրեմն՝ տիեզերքի կարգերը ճանաչելով ըմբռնել ինձ»<sup>6</sup>:

<sup>2</sup> Յարութ Կոստանդեան, Օրերի իմաստութիւնը, Փարիզ, 1935, էջ 15:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 15:

<sup>4</sup> «Անդաստան», Փարիզ, 1962, թիվ 13, էջ 8:

<sup>5</sup> Յարութ Կոստանդեան, Օրերի իմաստութիւնը, էջ 34:

<sup>6</sup> «Արևմուտք», Փարիզ, 1947, թիւ 25, էջ 5:

Բանաստեղծը հետևում է ինքն իրենից, տարանջատվում է իրենից՝ իրեն գտնելու, ճանաչելու համար և միաժամանակ տիեզերքի կարգերն ուսումնասիրելու նպատակով:

Կոստանդյանը հավատացած է, որ մարդն է իր կյանքի տերը, և ոչ ոք իրավունք չու-  
նի դժգոհելու իր կյանքից, քանզի յուրաքանչյուր ոք արժանի է նրան, ինչ իրեն բաժին է  
ընկնում իր սեփական արարքների, գործողությունների հետևանքով. «...մի ասել, - այս օ-  
րը դատարկ էր, եւ ունայն անցաւ: Որովհետեւ դատարկ էր հոգիդ...»<sup>1</sup>: Կյանքի ճիշտ ուղին  
սեփական ուժերով, սեփական միջոցներով գտնելով, երկրային հաճույքներից, ցանկու-  
թյուններից հրաժարումով և հնարավոր է հասնել ազատագրման:

Բուդդիզմի փիլիսոփայությունը քարոզում է փրկություն տառապանքներից՝ երկրա-  
յին ցանկություններից հրաժարվելու, միրվանային՝ «բարձրագույն պայծառացմանը»,  
հասնելու միջոցով: Հ. Կոստանդյանը նույնպես կարևորում է էքստազային վիճակի հաս-  
նելը՝ միրվանան, ինչպես նաև յոգայի սկզբունքը.

Թող պանայն տեսնես հեռո՛ւն...  
Մինչեւ երագ ու միրվանա՛...:  
Հոգիս՝ սլացող մի մետի պէս՝  
Անհունն ի վեր է բարձրանում,  
Եւ իր թռիչքի գագաթն հասած՝  
Դեպ՝ վար մետում<sup>2</sup>:

Յոգան իրենից ներկայացնում է այն միջոցների ամբողջությունը, որոնց օգնությամբ  
կարելի է ըմբռնել իրականությունը և հասնել ազատագրման: Ազատագրվել նշանակում  
է հասնել կեցության բարձրագույն աստիճանին և գիտակցել, որ բոլոր իրերը սկիզբ են  
առնում մարդու մեջ միավորվող գերագույն ոգուց: Այս միավորումը տեղի է ունենում էքս-  
տազային վիճակում. մարդը բարձրանում է սովորական մահկանացուի աստիճանից և  
ձուլվում է մաքուր կեցության, գիտակցության և ուրախության օվկիանոսին: Յոգան, ավե-  
լի ընդհանուր բնորոշմամբ, կատարելության հասնելու ճշմարիտ ուղին է: Իսկ միրվանան  
հոգու անդորրության հասնելու յուրօրինակ ձգտում է:

Հնդկական փիլիսոփայության մեջ փաստորեն առավել կարևորվում է բարոյական  
կատարելագործումը: Այս նույն գաղափարախոսությունն է ընկած նաև արևի խորհրդա-  
միջի հիմքում: Կոստանդյանի արևն էլ առաջին հերթին բարոյականության չափանիշ է,  
ինչպես արևելյան քնարերգության մեջ:

Հնդկական փիլիսոփայությունից են գալիս նաև Կոստանդյանի՝ կյանքի և մահվան  
հավերժական հերթագայության մասին ունեցած դատողությունները, որոնք, իհարկե, ի-  
րենց արտահայտությունն են գտել նրա ստեղծագործություններում:

Հող՝  
Արգանդ, գերեզման  
Ու նորից արգանդ:  
Ուր ես ապրել եմ  
Երկար տարիներ՝  
Առաջ քան ծնունդս:  
Ուր, երբ որ մեռնիմ,  
Նորէն պիտ ապրիմ  
Երկար տարիներ՝  
առաջ քան ծնունդս...՝

<sup>1</sup> Յարուս Կոստանդեան, Օրերի իմաստությունը, էջ 7:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 34: Այս բանաստեղծությունն առաջին անգամ տպագրվել է «Անահիտ»  
պարբերականում (1932, Դ տարի, թիվ 1—2, էջ 132, Փարիզ) «Նիրվանա» վերնագրով:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 23:

Սա փաստում է կյանքի հավերժական շրջապտույտի մասին: Ծնունդը և մահը խորհրդանշում են միայն մարմնի ստեղծումն ու ոչնչացումը, իսկ նոր ծնունդները հանդես են գալիս որպես հոգու «ճամփորդություն», կյանքի շրջապտույտ (սանսարա), հոգի, որը մի ծնունդից մյուսն է անցնում կարմայի օրենքի համաձայն: Մարդ ծնվում է, մահանում, վերածվում հողի, որպեսզի նորից կենդանություն ստանա, վերածնվի: Ընդ որում, այն վիճակը, որի մեջ տեղի կունենա հաջորդ ծնունդը, հատուցում կդառնա նախորդ ծնունդների ժամանակ կատարած արարքների: Սակայն վերջին հաշվով.

Ունկն դի՛ր, ունկն դիր սաստկացող հովին,  
Սոյլն այս սպառող, փոշին գերբնական –  
Որ կեանքըն ահա խառնում է հողին,  
Եւ տեսիլքն հոգու՝ լոյսին իրական.  
Ջի սերն իսկ այստեղ վերածում է յուշի.  
Եւ յիշատա՛կը – մոռացուող ոչի՛նչ.  
Վերջապէս ամէն ինչ դառնում է փոշի,  
Եւ փոշին դառնում է ամէն ինչ...<sup>10</sup>

Կոստանդյանն իր ստեղծագործություններում չի առանձնացնում նաև սիրո և սեռի առհամաները: Սեր-սեռի ըմբռնման հարցում ևս բանաստեղծը երբեմն հակվում է դեպի հնդկական փիլիսոփայությունը: Դրա վառ ապացույց կարող է լինել, թերևս, նրա «Ծիսայական խորհուրդ» բանաստեղծությունը, որտեղ և Կոստանդյանը ոգեկոչում է հնդկական Ծիվա աստծուն.

Բա՛ց է ճամբան, լա՛յն է ճամբան ու փոշոտ  
Մի՛նչեւ ափը նըլիրական Գանգէսի,  
Ուր անցնում է Ծիսայի հետ վաւաշոտ  
Ամբոխն անասնձ խորհրդդաւոր հանդէսի՛:

Գեղեցիկ է սեր-սեռը Արևելքում, այն մի ամբողջ լուրջ արարողություն է, որին պատրաստվում են երկար ժամանակ: Արևելքի կինը կարծես թե կախարդ է, վիռկ, քաջածանոթ սիրո խորհրդին, գիտակ իր հմայքների գորությանը, «քրմուհին բոլոր «գաղտնի գիտութեանց».

Գալարում են մերկութիւններ նազանքով՝  
Որովայններ՝ – նըման տարփող օձերի,  
Եւ ըստիքներ՝ – գոյգ խոստումներ քովէ քով –  
Խայթում են ցոփ հայեացքները բոցերի՛:

Կոստանդյանն այստեղ ներկայացնում է նաև ամլության և ստեղծման, արարման իր ըմբռնումը.

Իջնում է մութն - արծարծում են արդ ջահեր,  
Եւ աստուծոյն օծում արձանն առնական՝  
Ամլութեան դէմ սեռն իր յուրթի հըրաւէր՝  
Արարչութեան մէջ - արաբիչ գերբնական՛:

Կոստանդյանի թե՛ վաղ, թե՛ հետագա տարիների ստեղծագործություններում իշխող է լուրջ մտտիվը: Վեղայական գրականության մեջ չեն հանդիպում լուրջ մասին դիտարկումներ: Ընդհակառակը, այստեղ ոչ թե լուրջունն է առաջնային, այլ խոսքը, որը համարվում է իմացության, գիտակցության առաջին կարևորագույն նշանը: Լուրջյան մտտիվները հավանաբար գալիս են հին չինական փիլիսոփայությունից:

<sup>10</sup> Յարութ Կոստանդեան, Բանաստեղծութեամբ, էջ 28:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 62:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 63

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 63:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ Կոստանդյանը գրականություն ստեղծելիս, մշակելիս անտարբեր չի եղել արևելյան, այս պարագայում մասնավորաբար հնդկական փիլիսոփայության նկատմամբ, ինչն էլ Կոստանդյանի համար ներշնչանքի աղբյուր է հանդիսացել: Բանաստեղծի՝ երազի և իրականության փոխհարաբերության մասին դատողություններում, որոնք կարևոր նշանակություն ունեն նրա կենսափիլիսոփայության մեջ, խնդիրը լուծվում է հոգուտ երազի գոյության, որն էլ հեղինակի համար դառնում է կատարելության տանող կարևորագույն ճանապարհներից մեկը:

**С. А. МАНУКЯН - *Некоторые вопросы жизненной философии Арута Костандяна.*** - Арут Костандян является одним из интереснейших писателей армянской общины Франции. Несмотря на то, что он был далек от литературно-общественной жизни, вклад его в поэзию армянской диаспоры Франции достаточно значителен. Цель автора статьи вкратце представить влияние Восточной философии (в частности индийской) на развитие эстетических взглядов, мировоззрения, на творчество писателя.